«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – ՆԶՊ և ԱԿ

Մասնակից – Սոս Հովսեփյանի անվան հ. 115 ավագ դպրոցի զինղեկ՝ գնդապետ Դավիթ Գրիգորյան

Ղեկավար- *փոխգնդապետ* ՝Արտակ Իսահակյան

Թեմա- Արդի խնդիրներն ու մոտեցումները զինղեկների կարգավիճակի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1 ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԶԻՆՂԵԿՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1 Զինղեկի մանկավարժական աշխատանքը դպրոցում.....5

1.2 Ուսուցմանադաստիարակչական գործընթացի կազմակերպումը «ՆԶՊ» ուսումնական առարկայի շրջանակներում.....8

Եզրակացություններ և առաջարկություններ.....15

Օգտագործված գրականության ցանկ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժության մեջ կրթության խնդիրների շարքում առաջնահերթությունը տրվում է անձի պահանջների բավարարմանը, իհարկե, հաշվի առնելով հասարակության և պետության պահանջները: Հետևաբար, այսօր այդ սկզբունքը մեկնաբանվում է որպես պահանջ, առաջին հերթին, աջակցել երեխային իր համակողմանի զարգացման, մասնագիտական և կենսական ինքնորոշման մեջ:

Այս առումով հանրակրթական դպրոցում առանցքային դերակատարում ունի «ՆԶՊ» ուսումնական առարկայի կրթադաստիարակչական նշանակությունը: Անշուշտ, այստեղ առանցքային կարգավիճակ ու դեր է խաղում առարկայի ուսուցիչը՝ զինղեկը, ով կատարում է հապապետական նշանակության մեծ աշխատանք՝ կրթելով ու դաստիարակելով հայրենասեր, բարձր կամային որակներով, անվախ ու կազմակերպված սերունդ: Ելնելով առարկայի բովանդակային առանձնահատկություններից ՝ զինղելը լուծում է մի շարք հիմնախնդիրներ, որոնց թվում են՝

- Սովորողների հայրենաճանաչողական գիտելիքների հարստացում Հայրենասիրական դաստիարակություն:
- Աշխատանքային դաստիարակություն:
- Ֆիզպատրաստության մակարդակի բարձրացում:
- Մարտավարության կանոններին և ռազմական ենակառուցվածքներին ծանոթացում:
- Կամային բարձր որակների և արժեհամակարգային մշակույթի ձևավորում:
- Կարգապահության նկատմամբ հարգանք:

Այս ամենը իմանալով, կարողանալով՝ սովորողները կդառնան ավելի հավասարակշռված ու կարգապահ, հարգանքով կմոտենան իրենց ուսմանն ու հայրենիքին, հասարակությանն ու շրջապատին: Կարող ենք պնդել, որ զինղեկի ներկայությունը հանրակրթական դպրոցում անգնահատելի մեծ նշանակություն ունի, նրա դերն առանցքային է նաև որպես զինվորական գործի մասնագետ: Նա կարողանում է դաստիարակչական մի շարք մեխանիզմների կիրառման շնորհիվ հոգեխթանիչ աշխատանքներ իրականացնել դպրեցում վատ վարքագծով աչքի ընկնող սովորողների հետ: Հաշվի առնելով զինղեկի անձնական կամային ու մասնագիտական որակները՝ որպես կանոն, այդ աշխատանքներն ունենում են դրական վերջնարդյունք:

Այսպիսով, կարևոր և առանցքային ենք համարում զինվորականի ներկայությունը դպրոցում, ով կարողանում է համախմբել սովորողներին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ, դաստիարակության միջոցով կառավարելի է դարձնում ուսումնական գործընթացն ու համախմբում մանկավարժական կոլեկտիվը:

Հետազոտության արդիականությունը՝

Հետազոտության արդիականությունը մեծապես պայմանավորված է հանրակրթական դպրոցում զինղեկի ներկայության արժեորմամբ, ում ուսերին սովորողների մտավոր, ֆիզիկական, հայրենասիրական, աշխատանքային դաստիարակության իրականացումն է «ՆԶՊ» առարկայի դասավանդման շրջանակներում:

Հետազոտության նպատակը՝

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել հանրակրթական դպրոցում «ՆԶՊ» առարկայի անփոխարինելի նշանակությունը սովորողների ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացման, իմացական կարողությունների ընդլայնման և ռազմահայրենասիրական դաստիարակության վրա:

Հետազոտության խնդիրները՝

- Մատնանշել այն մեթոդամանկավարժական հնարքներ ու եղանակները, որոնք կօգնեն զինղեկի հասնել հանրակրթական պետական չափորոշչային վերջնարդյունքներին:
- Շեշտադրել ՆԶՊ-ի ազդեցությունը սովորողների մոտ մի շարք կարողունակությունների զարգացման ընթացքում:
- Ցույց տալ զինղեկի աշխատանքային գործունեության ընթացքում հնարավոր հիմնախնդիրներն ու դրանց լուծման եղանակները:

ԳԼՈՒԽ 1 ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԶԻՆՂԵԿՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1 Զինղեկի մանկավարժական աշխատանքը դպրոցում

Նախնական զինվորական պատրաստություն առարկան իր կարևոր դերակատարումն ունի ապագա զինվորների դաստիարակության գործընթացում:

Այս առումով անգնահատելի է ուսումնական գործընթացում սովորողի հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը, որն անկյունաքարային է ու կարևոր անձի հետագա կենսագործունեության համար: Մի չնչին բացթողումը, մեթոդի կամ հնարի սխալ ընտրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սովորողի հոգեկերտվածքի, ընկալումների, առհասարակ բնականոն զարգացման վրա, ուստի այս պարագայում շատ է կարևորվում սովորող-ուսուցիչ առողջ կապը:

ՆԶՊ-ի դասավանդման շրջանակներում մեծ է զինղեկի՝ որպես կրթողի դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման, ռազմահայրենասիրական

դաստիարակության հարցում: Այս համատեքստում կարևոր է սովորողնի տալ այն գիտակցումը, որ առարկան սոսկ մեխանիկական վերարտադրում չի պահանջում, այլ գիտելիքների ու կարողությունների մի ամբողջություն, որը ապահովելու է սովորողների հետագա կենսագործունեությունը: «Զինղեկը պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի չափորոշչին և ծրագրերին համապատասխան և ղեկավարում է ռազմական գործն ուսումնասիրող խմբակների աշխատանքը, ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը, պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և ՆԶՊ առարկայի չափորոշչին և ծրագրերին համապատասխան[1]»: Ուսումնական գործընթացում սովորողներին դեպի դասը բերելու համար զինղեկը պետք է ընտրի արդյունավետ մեթոդներ և դասի վարման ձևեր: Անշուշտ կարևոր է, որ զինղեկը դասավանդման ժամանակ ցուցաբերի նաև անհատական մոտեցումներ՝ հաշվի առնելով սովորողների կրթական առանձնահատուկ կարիքները, բնավորության գծերը, խառնվածքը, ուստի տարբերակված մոտեցումներն ուղղակի անհրաժեշտություն են: Զինղեկը պետք է գիտակցի, որ կրթական բարեփոխումներով պայմանավորված՝ իր առջև դրված խնդիրներն ու հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների, հնարների կիրառում:

Կարևոր է նաև զինղեկի աշխատանքը սովորողների հետ առանձին, նաև նրանց ծնողների ներգրավմամբ: Յուրաքանչյուր ընտանիք ունի անհատական մոտեցում երեխայի կրթությանն ու դաստիարակության հարցում: Ընդհանուր հասարակության մեջ, սակայն, կան կոնկրետ մոտեցումներ. գնահատվում ու խրախուսվում է բարձր մարդկային արժեքներով, կիրթ ու կրթված անձնավորությունը: Մարդկային այս որակներն, անշուշտ, ապահովվում են առաջին հերթին ընտանիքում, ապա գործընթացը շարունակվում է հանրակրթական ուսումնական հաստատությունում: Այս առումով դպրոցն ունի մեկ տեսակետ, որը փոփոխման ենթակա չէ և ամրագրված

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808

է ՀՀ հանրակրթության մասին օրենքում՝ «Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է[2]»:

Սովորողի կայացման, արժեհամակարգի ձևավորման համար մեծագույն վտանգ է ներկայացնում ծնողական անտարբերությունը: Այս տեսակետից ևս իր կարևորագույն դերակատարումն ունի մանկավարժական խորհրդատվությունը: Զինղեկի դաստիարակչական աշխատանքը ծնողների հետ անչափ կարոր է: Կարող ենք վստահաբար պնդել, որ զինղեկը մեծ դերակատարում ունի նաև սովորողների դաստիարակչական գործընթացում: Սկսած դեռահասության տարիքից սովորողների մոտ ի հայտ է գալիս նոր հետաքրքրություններ ու պահանջմունքներ, ուստի զինղեկը պետք է կարողանա վերահսկել այդ հետաքրքրությունները, որպեսզի հնարավոր լինի կանխարգելել հնարավոր բարդությունները: Ինչպես ընտանիքը, այնպես էլ դպրոցը մեծ ներդրում է ունենում նաև երեխայի սեռադերային նույնականացման մեջ, որի ընթացքում դեռահասը յուրացնում է որոշակի սեռային դերեր և վարքի կանոններ: Ավագ դեռահասության տարիքի սովորողների՝ ապաագա զինվորների հետ կիրառվող հոգեախտորոշիչ մեթոդները պետք է հետաքրքրություն առաջացնեն, ինքնուրույնության ու ոչ բովանդակային փոփոխություններ մտցնելու, ոչ ստանդարտ պատասխաններ տալու, սեփական անձը դրսևորելու, գիտելիքներն ու կարողությունները ցուցադրելու հնարավորություն տան դեռահասին: Դեռահասներին բնորոշ հետաքրքրությունն ինքնաճանաչողության հանդեպ բարենպաստ պայմաններ է ստեղծում հոգեախտորոշիչ մեթոդիկաների կիրառման համար, հատկապես եթե դրանք հետաքրքիր և օգտակար տեղեկություններ են տրամադրում դեռահասին սեփական անձի մասին, օգնում են նրան ավելի լավ ճանաչելու իրեն ու համեմատվելու մյուսների հետ[3]: ՆԶՊ- դասավանդման ընթացքում զինղեկը, որին բնորոշ է կարգապահությունն ու զինվորական ճշտապահությունը, պետք է պահպանի

[2] www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 4, կետ 2:
[3] Հոգեբանությունը և կյանքը, Երևան 2021, էջ 13:

զգոնություն սովորողների ներանձնային շփումների նկատմամբ՝ հաշվի առնելով սեռատարիքային առանձնահատկությունները: Առողջ մթնոլորտը ենթադրում է հասունացման տարիքի անցնցում հաղթահարում, ինչն է հետագայում առողջ սերունդ ունենալու գրավականն է: Զինղեկն իր անձնական օրինակով մեծ դեր է խաղում սովորողների և մանկավարժական կոլեկտիվի կարգապահության ամրապնդման և բանակ-հասարակություն կապերի սերտացման գործում, ուստի վստահաբար նրա խոսքը մեծագույն արժեք ունի ցանկացած սովորողի մոտ: Կրթության զարգացման գլխավոր նպատակն է կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր սովորող հնարավորություն ունենա ստանալ իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն, կարողանա բավարարել իր երկրի տնտեսության ու հասարակության պահանջները, լիարժեք ծառայի ազգային շահերին: Հենց այս ուսումական առարկան իր բովանդակությամբ կարող է սովորողների համար լինել օրինակելի ու հայրենասեր քաղաքացի դաստիարակելու արդյունավետ միջոց:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ սովորողների, այդ թվում՝ նախազորակոչային տարիքի տղաների համար կարևոր է առարկայի տեսական ու գործնական դասերի նշանակությունն ու զինղեկի անմիջական մասնակցությունը նրանց դաստիարակության գործընթացին: ՆԶՊ առարկայի գործնական պարապունքների շրջանակներում իրականացվում ֆիզիկական և մտավոր դաստիարակություն, որն էլ իր հերթին այն կայուն ու կարևոր հիմնաքար է: Առարկան սովորողներին տալիս է հոգեբանական կայուն կենսակերպ, մտավոր ներուժ ու ռազմահայրենասիրական բարձր գիտակցում: Այս ամենի կերտողն, անշուշտ, նաև զինղեկն է, կարգապահ զինղեկի ուղիղ մասնակցությունը մեծ դերակատարում ունեն համապետական կրթական նպատակներին հասնելու համար:

1.2 Ուսուցմանադաստիարակչական գործընթացի կազմակերպումը «ՆԶՊ» ուսումնական առարկայի շրջանակներում

Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն, ներառյալ նրանք, որոնք գերազանցում են նախկինում հաղթահարածը, մարդ կարող է կառավարել, հենվել իր իմացական ու գործառական ներուժի վրա ու հաղթահարել, ուստի և կրթության արդիականացման հիմքը հենց ինքնուրույն, նախաձեռնող ու նորարար սովորող ունենալու վերջնարդյունքն է: Այս բոլոր գործընթացներում իր դերն ունի «ՆԶՊ» ուսումնական հաստատությունը, ուսումնական առարկան: Ժամանակակից ուսուցչի, այդ թվում՝ զինղեկի խնդիրներից մեկը սովորողին բացահայտելն ու ցույց տալն է ուսումնական առարկայի կապը կյանքի այս կամ այն բնագավառի հետ, ինչը թույլ կտա սովորողին կարևորել տվյալ առարկայից ստացած գիտելիքնը, կարողությունն ու հմտությունը: Սա չափազանց կարևոր պայման է որակյալ կրթական համակարգ կառուցելու տեսանկյունից: ՆԶՊ առարկայի դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

- ՀՀ զինված ուժերի և ռազմարվեստի պատմություն
- Մարտավարական հիմունքներ
- Կրակային պատրաստություն
- Համազորային կանոնադրություններ
- Շարային պատրաստություն
- Ռազմական տեղագրություն
- Միջազգային մարդասիրական իրավունք
- առաջին բուժօգնություն

Վերոհիշյալ բաժինները առանձին-առանձին կամ մի քանիսը միասին յուրացվում են դասարանային պայմաններում, որտեղ ապահովվում են միայն տեսական գիտելիքներ, բայց կարող են իրականացվել նաև ռազմամարզական ճամբարներում, որտեղ գիտելիքները ավելի գործնական ու կիրառելի են: ՆԶՊ-ի դասավանդման ընթացքում առանցքային դեր ունեն գործնական դասերն ու ռազմադաշտային պարապունքները: Դրանց իրականացման արդյունքում սովորողները դասռնում են ավելի ինքնուրույն, բանիմաց ու նախաձեռնող, կարողանում են կատարել տեղանքի ուսումնասիրություն, օգտվել քարտեզներից, կատարել ուժային բնույթի հանձնարարություններ, ծանոթանում են խրամատների կառուցվածքին, հրաձգության ու շարային պատրաստության գործնական կիրառությանը: ՆԶՊ առարկայից գործնական դասերը սովորողների մեջ զարգացնում են մի շարք կարողություններ ու հմտություններ, որոնցից են.

- զինվորական պատրաստության հիմունքների վերաբերյալ գիտելիքների խորացումն ու համակարգումը,
- մարտական և այլ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ կարողությունների ձեռքբերում և հմտությունների զարգացում, գիտելիքների յուրացում և ոլորտի տարբեր կողմերի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորում,
- հայրենիքի պաշտպանության գործին անվերապահ պատրաստակամության ձևավորում,
- հայրենիքի պաշտպանությանը միտված՝ սովորողների մասնագիտական կողմնորոշում (ռազմական, ռազմատեխնիկական, ռազմաարդյունաբերական, տեղեկատվական անվտանգության, ռազմական բժշկության, արտակարգ իրավիճակներ),
- լեռնային պատրաստության հիմունքերի ծանոթացում
- ստեղծագործական ունակությունների, ռազմագիտական երևույթները բացատրելու և տարբեր բնագավառներում կիրառելու, սեփական գործունեության հետևանքները կանխատեսելու կարողությունների և հմտությունների զարգացումը,

- կրթությունը ռազմական ուղղությամբ շարունակելու համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը[4]:

Զինղեկը, դասավանդման ընթացքում ցույց տալով պատմության դասերը՝ հաղթանակներն ու պարտությունները, պետք է սովորողների մոտ ձևավորի այն համոզմունքը, որ ՆԶՊ-ից ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ոչ միայն անձնական խնդիրն է, այլև ունի պետական անվտանգության նշանակություն: Պետության անվտանգության ապահովումը անհնար կլինի առանց հզոր բանակի և հայրենիքին նվիրված քաղաքացիների, ուստի ՆԶՊ- դասավանդումը կոչված է նաև այդ պատկերացումները ձևավորել սովորողների մոտ: Զինղեկը պետք է հիշեցնի մեր մեծերի պատգամները հայրենասիրության մասին /Գարեգին Նժդեհ, Մոնթե Մելքոնյան, Անդրանիկ և ուրիշներ/:

Դասրը պետք է լինեն բովանդակային առումով հագեցած, նոր մեթոդական համակարգերի կիրառմամբ, ինչը թույլ կտա, որ սովորողները համաչափ մասնակցեն դասապրոցեսին: Հարկավոր է անընդհատ սովորողներին հնարավորություն տալ խոսելու, կարծիք հայտնելու, արտահայտվելու: Ուսուցչի համար կարևոր է սովորեցնել և նպաստել, որ սովորողը սովորածը մտապահի: Յուրաքանչյուր սովորող ունի իր ինքնաճանաչումը, և մենք չենք կարող ստիպել նրանց սովորել, բայց կարող ենք ստիպել մտածել: Որպեսզի սովորողներն ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն:

Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը: Ուսուցիչը, նկատելով աշակերտների դրսևորած ընդունակությունները, պետք է ուղղորդի հասնելու լիարժեքության, ինքնադրսևորման և ինքնաբավարարման: Այս ձևով զարգանում են նաև մտածողությունը, երևակայությունը: Ասենք նաև, որ դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի

[4] https://escs.am/files/files/2021-05-06/114a72e4ebca1a68bcd63c2e091ccc9f.pdf ՆԶՊ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդդասարաններ):

ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի , մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում:

Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Ուստի շատ կարևոր հանգամանք է , որ դասավանդմանը զուգահեռ զինղեկը կարողանա սովորողի մոտ զարգացնել նաև արժեքային համակարգ: Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Այս ամենը կարողանալու համար զինղեկի համար շատ կարևոր է անընդհատ զարգազնել իր գիտելիքները, գնալ նորարարական մեթոդների հետևից, շարունակել կատարելագործել իր մասնագիտական որակները: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները: Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու,
- ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու,
- անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն,
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն,
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն,

- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն,
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն [5]:

Հանրակրթական դպրոցում ՆԶՊ-ի դասաժամին մեծ ուշադրություն է դարձվում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Ռազմահայրենասիրությունը սովորողների գաղափարական մակարդակի բարձրացման անհրաժեշտ միջոցներից է: Հայրենասիրություն սերմանելն ամենաբարդ խնդիրներից է, որի արդյունքը միանգամից չի երևում: Դա ամենօրյա հետևողական աշխատանք է: Ապագա հայ զինվորը պետք է գիտակցի, որ իր երկիրը երբեք անարդար պատերազմներ չի վարել, որ իր պարտքն է հայրենիքը պաշտպանել թշնամիներից ու կռվել պատմական անարդարության դեմ: Այս առանցքային գաղափարներին հասնելու համար ՆԶՊ-ի դասաժամը պետք է ունենա աշակերտակենտրոն բնույթ, հագեցած լինի ակտիվ մեթոդական հնարներով, ինչը թույլ կտա սովորողին ազատվել տարբեր տեսակների բարդույթներից, վախերից, նրանք կսովորեն լսել միմյանց, կարևորել մեկմեկու կարծիքները, կզարգանա նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները:

Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման հայրենասիրության: Վերջինս բնութագրվում է որպես բարդ, բովանդակային առումով բազմաբաղադրիչ երևույթ, որն ունի զարգացման տարբեր փուլեր և մակարդակներ: Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված

[5] http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4).pdf Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ[6]:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում օրեցօր ավելի է կատարելագործվում: Իսկ արդյունքները տեսանելի են բոլորին: Այս խնդիրների լուծմանը միտված աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու, հանրապետությունում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներին լուծում տալու, ինչպես նաև համատեղ միջոցառումների ծրագիր իրականացնելու նպատակով

նախնական զինվորական պատրաստության դասարանները հագեցած են զորատեսակները, համազորային կանոնադրությունը, զինվորական կոչումները ներկայացնող հարուստ պաստառներով, որոնք ավելի կենդանի, իրական ու հետաքրքիր են դարձնում դասանյութը:

Դպրոցի բակում ու ներսում ծածանվող Եռագույնը, ՀՀ և ԶՈՒ զինանշանները, օրհներգերի տեքստերը զգաստություն ու հպարտություն են ներշնչումյուրաքանչյուր սովորողի: Այս մթնոլորտում սովորողը, անշուշտ, տոգորվում է գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչում մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և գիտակցում, որ ինքն արժանի ժառանգորդը, պահապանն ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ զինղեկի ներկայությունը դպրոցում լուծումբ է բազմաթիվ օրապահանջ հանդիսացող կրթական խնդիրներ, որոնք կամբողջացնենք ստորև.

- Զինղեկը սովորողներին ծանոթացնում է ռազմական արվեստին, մարտավարության հիմունքներին, պատերազմական և այլ արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման և անվտագության կանոնների պահպանման եղանակներին:

[6] http://www.hayzinvor.am/33565.html «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ հանդես:

- Զինղեկը նպաստում է դպրոց-բանակ կապի ամրապնդմանն ու շարունակականությանը, ինչն այսօրեական պայմաններում անչափ կարևոր է:
- Զինղեկը նպաստում է սովորողների կարգապահության, պատասխանատվության բարձրացմանը՝ օրինակծառայելով սովորողներիհամար:
- ՆԶՊ-ի դասին սովորողները ծանոթանում են մեր հայրենիքի պատմության ռազմական էջերին, հերոսներին ու նրանց սխրանքներին:
- Զինղեկի անմիջական ջանքերով դպրոցում նշվում ե բազմաթիվ պետական տոներ, ոգեկոչման երեկոներ են անցկացվում, ինչը բորբոքում է սովորողների հայրենասիրական զգացմունքները:
- Զինղեկը նպաստում է դեռահասների՝ տարիքային դժվարությունների անցնցում հաղթահարմանը, անհատական աշխատանք է տանում սովորողների, նրանց ծնողների հետ:
- Զինղեկը համագործակցում , է մանկավարժական կոլեկտիվի, այլ զինղեկների, զինկոմիսարիատներիհետ՝ նպատակ ունենալով նպաստել կրթության որակի բարձրացմանը:
- Ռազմադաշտային պարապունքները սովորողներին տալիս են ինքնուրույնություն, դժվարությունները հաղթահարելու ունակություն:

Այսպիսով, կարող ենք վստահաբար ասել, որ հանրակրթական դպրոցներում դասավանդվող մյուս ուսումնական առարկաների կողքին իր ուրույն և կարևոր դերն ու նշանակությունը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ունի ՆԶՊ-ն: Մեծ է առարկայի նշանակությունը հատկապես սովորողների հայրենաճանաչության բարձրացման, ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԶԳԻ ՊԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԵՊ ՆԱԽ և ԱՌԱՋ ԴՐՍևՈՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆ ԱԶԳԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՍԵՓԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱԳԱՑՄԱՆ ՁևՈՎ»:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ահռելի մեծ է ՆԶՊ առարկայի դասավանդման նշանակությունը և այդ համատեքստում մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Զինղեկը, ով իր մարդկային կերպարով, հայրենասիրական գաղափարներով, զինվորական պահանջկոտությամբ և կարգապահությամբ , ինչպես նաև անձնական օրինակով մեծ դեր է խաղում սովորողների և մանկավարժական կոլեկտիվի կարգապահության ամրապնդման և բանակ-հասարակություն կապերի սերտացման գործում, կարողանում է լուծել իր առջև դրված լրջագույն խնդիրները:

Անշուշտ, ուսումնական գործընթացում կան նաև դժվարություններ: Դրանք պայմանավորված են ժամանակի մարտահրավերներով, երբ սովորողներն իրենց ցանկալի ինֆորմացիան քաղում են համացանցից և աշակերտակենտրոն դասը վերջիններիս համար դառնում է անհետաքրքիր: Այնուամենայնիվ, դրա լուծումը, իհարկե, կարելի է գտնել: Հաշվի նստել սովորողի հետ, լսել նրա կարծիքը, դուրս գալ կարծրատիպերից ու սովորողներին հնարավորություն տալ դասի ընթացքում հետազոտելու, նախագծելու, ինքնուրույն գործելու: Այսպես սովորողը մոտիվացվում է, դասնը նրա համար դառնում է հետաքրքիր: Կարևոր ենք համարում նաև այն

միջավայրը, որում աշակերտը իրեն ապահով ու հանգիստ կզգա, հետևաբար ստացած գիտելիքը կարող է հեշտությամբ ընկալվել ու մնայուն դառնալ:

ՆԶՊ-ն իր բովանդակությամբ և չափորոշչային վերջարդյունքների սահմանված պահանջներով ունակ է սովորողների համար լինել օրինակելի ու հայրենասեր քաղաքացի դաստիարակելու արդյունավետ միջոց:

Ուսումնառության գործընթացը սովորողների համար հետաքրքիր դարձնելու համար հանդես գանք առաջարկություններով՝

- **Սովորողների համար ստեղծել բարոյահոգեբանական այնպիսի միջավայր, որ նա անընդհատ սպասի հաջորդ պարապունքին, սա հաջողելու գրավականներից մեկն է:**
- **Դասապրոցեսում անպայման կիրառել ՏՀՏ գործիքներ, ոչ այնքան պատմել, որքան ցույց տալ:**
- **Մեծացնել էքսկուրսիաների և ռազմահայրենասիրական միջոցառումների թվաքանակը:**
- **Սովորողի համար լինել, ոչ միայն ուսուցիչ, այլև հոգատար ընկեր ու լավ բարեկամ:**
- **Խրախուսել, ոգևորել ու բարձրացնել սովորողին, ժողովրդական իմաստությունն ասում է. «ՔԱՂՑՐ ԼԵԶՈՒՆ ՕՁԸ ԲՆԻՑ ԿՀԱՆԻ»:**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. www.arlis.am/documentview.aspx?docID=74345

ՀՀ Հանրակրթության մասին օրենք:

2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808
3. Հոգեբանությունը և կյանքը, Երևան 2021:
4. https://escs.am/files/files/2021-05-06/114a72e4ebca1a68bcd63c2e091ccc9f.pdf ՆԶՊ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդդասարաններ):
5. http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4).pdf
   Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
6. http://www.hayzinvor.am/33565.html «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ հանդես: